

Հավելված N 2

ՀԱՊԿ Նախագահի 18րդ փետրվարի 2025թ

Թիվ 01-18/2 որոշման


Հ. Աբրահամյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Պարա սեղանի թենիսի 2025 թվականի ՀՀ առաջնության

Երևան 2025թ

1. Մրցաշարի նպատակները և խնդիրները:

- Մրցաշարի ուժեղագույների որոշումը:
- Նպաստել պարա սեղանի թենիսի ճանաչման բարձրացմանը ՀՀ-ում:
- Պահպանել մարզաձևի հեղինակության բարձրացումը:
- Տաղանդավոր մարզիկների և մարզուհիների բացահայտումը:
- Պարաօլիմպիկ մարզաձևի մասսայականացումը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում և հաշմանդամային սպորտի զարգացումը:
- Թենիսի միջոցով ապահովել մրցակցության ու փոխըմբռնման ոգի:
- Արդար խաղի ապահովումը:

2. Առաջնության կազմակերպումը.

Պարա սեղանի թենիսի ՀՀ 2025թ առաջնության կազմակերպիչը Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտեն է (այսուհետ՝ ՀԱՊԿ): Առաջնության կազմակերպումն իրականացվում է ՀԱՊԿ Պարա սեղանի թենիս մարզաձևի հանձնաժողովը և առաջնության Կազմկոմիտեն: Մրցաշարի կազմակերպիչը և իրականացնողները պատասխանատու են մրցաշարի պատշաճ անցկացման համար:

3. Հաշվետվություններ

Առաջնության արդյունքների մասին արձանագրությունները Կազմկոմիտեի կողմից պետք է ներկայացվեն ՀԱՊԿ՝ մրցաշարի ավարտից անմիջապես հետո, իսկ հաշվետվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Մասնակիցներ և հայտերը

Պարա սեղանի թենիսի ՀՀ առաջնությանը կարող են մասնակցել 14 տարին մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը լրացող ֆիզիկական հաշմանդամություն ունեցող բոլոր ՀՀ քաղաքացիները և Արցախից բռնի տեղահանված և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձիք:

Առաջնությանը չեն կարող մասնակցել ՀՀ օրենսդրության, Միջազգային պարաօլիմպիկ կոմիտեի կանոնակարգերի կամ ՀԱՊԿ կանոնադրության համաձայն որակագրված այն մարզիկները, որոնց որակագրվման ժամկետը ուժի մեջ է առ առաջնության մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը:

Առաջնությանը մասնակցելու համար ակումբները, մարզական հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև անհատ մարզիկները մինչև **2025 թվականի մարտի 15-ը, ժամը 23:00**, սահմանված ձևով լրացված մասնակցության հայտը պետք է

ուղարկեն ՀԱՊԿ պաշտոնական arm.paralympic@gmail.com էլեկտրոնային փոստին կամ հանձնել ՀԱՊԿ գրասենյակ (ք.Երևան, Ծիծեռնակաբերդի 16 հասցե):

5. Առաջնության անցկացման կանոններ

Պարա սեղանի թենիսի մրցումները կազմակերպվում են Միջազգային սեղանի թենիսի ֆեդերացիայի (ITTF) հաստատած կանոնների համաձայն:

Տարբերություններից մեկն առնչվում է մատուցման (գնդակը խաղի մեջ դնելու) ընթացքին: Ըստ ITTF-ի կանոնների՝ գնդակը պետք է նետվի բաց ափից ոչ պակաս, քան 16 սմ բարձրության վրա: Մակայն, հաշվի առնելով մարզիկների ֆիզիկական հնարավորությունները, հնարավոր է կիրառել այլ մատուցման եղանակներ, եթե դա նշված է դասակարգման քարտում:

Մրցումների առանձնահատկությունները

- **1-5 դասակարգմամբ խումբ (նստած) խաղացողների դեպքում, եթե՝**
 - Գնդակը դիպչում է հակառակ կողմին և մնում է սեղանի վրա
 - Գնդակը դիպչում է հակառակ կողմին, բայց վերադառնում է ցանցի ուղղությամբ
 - Գնդակը դիպչում է հակառակ կողմին, բայց դուրս է գալիս սեղանից կողքի

Եթե ընդունող խաղացողը հարվածում է գնդակին, մինչ այն կհատի կողմնային գիծը կամ երկրորդ անգամ կհարվածի իր կողմում, մատուցումը համարվում է կատարված և չի կրկնվում:

- **1-5 դասակարգմամբ խմբերի զույգ մրցաշարերում՝**
 - Մարզիկները պետք է հերթափոխով ընդունեն և վերադարձնեն գնդակը
 - Խաղացողի անվասայակի որևէ մասը չպետք է անցնի սեղանի կենտրոնական գծի երկարացման սահմանը, հակառակ դեպքում միավորը տրվում է մրցակցին:

Մրցաշարերը անցկացվում են 5 պարտիայի հաշվարկով, 11 միավորով: Եթե հաշիվը 10:10 է, հաղթում է առաջինը 2 միավորի առավելություն ստացող մարզիկը կամ զույգը:

Մրցումային դասակարգում.

- **Անհատական մրցաշար՝** 1-10 դասակարգմամբ խմբեր (տղամարդիկ և կանայք)
 - **1-5 դասակարգմամբ խմբեր** – մարզիկներ՝ անվասայակով
 - **6-10 դասակարգմամբ խմբեր** – մարզիկներ՝ կանգնած (հենաշարժական խնդիրներով)
- **Զույգ մրցաշար՝**

- **Տղամարդիկ** (MW4, MW8, MS14, MS18)
- **Կանայք** (WW5, WW10, WS14, WS20)
- **Խառը զույգեր** (XW7, XS17)

Հատուկ իրավիճակ

- Որևէ դասակարգմամբ խմբում ընդամենը մեկ մարզիկ լինելու դեպքում, տվյալ դասակարգմամբ խմբի մարզիկը մրցում է համախմբված դասակարգմամբ խմբում:

Նշումներ.

- **M** – Men (տղամարդիկ), **W** – Women (կանայք), **X** – Mix (խառը)
- **W** – Wheelchair (անվասայլակով), **S** – Standing (կանգնած), **D** – Double (զույգ)
- Թվերը ցույց են տալիս զույգի ընդհանուր դասակարգման առավելագույն գումարը:

*Այս դասակարգումը կիրառվում է միայն մարզիկների համար, ովքեր ունեն հենաշարժական խնդիրներ:

6. Առաջնության անցկացման ժամկետները

Առաջնությունը անց է կացվելու 2025 թվականի մարտի 29-ից 30-ը: Առաջնության մեկնարկի ժամ է սահմանվել 11:00-ն:

7. Առաջնության անցկացման վայրը

Առաջնությունը կանցկացվի Երևանի «Դինամո» մարզական ակումբի փոքր դահլիճում, քաղաք Երևան, Վարդանանց 29 հասցեում:

8. Կացություն և սնունդ

Սահմանափակ թվով մասնակիցներ անվճար կապահովվեն սննդով և գիշերակացով (ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և չափով):

9. Տրանսպորտ

Սահմանափակ թվով մասնակիցների համար անվճար կապահովվի տրանսպորտային ծառայություն:

10. Մասնակցության վճարներ

Առաջնության մասնակցության համար սահմանված մասնակիցների քանակից ավել մասնակցի հայտ լինելու դեպքում, յուրաքանչյուր ավել անձի համար մասնակցության վճարի չափն է 13000 ՀՀ դրամ, որը վճարվում է ՀԱՊԿ հաշվարկային հաշվին:

Մասնակցության վճարն իր մեջ ներառում է սնունդ մեկ օրվա և գիշերակաց:

11. Մրցանակներ և պարգևատրումներ

Առաջնության ընթացքում կխաղարկվի մեդալների 3 հավաքածու՝

- 1) Տղամարդիկ 1-5 դասակարգման խումբ - մեկ հավաքածու
- 2) Կանայք 1-10 դասակարգման խումբ - մեկ հավաքածու
- 3) տղամարդիկ 6-10 դասակարգման խումբ - մեկ հավաքածու:

Խաղարկված մեդալները նվաճած մարզիկները կստանան դրամական պարգևներ ՀՀ կառավարության սահմանած չափերով:

Պատվոգրով և հավաստագրով կպարգևատրվի յուրաքանչյուր մասնակից մարզիկ՝ ըստ իր անհատական դասակարգման խմբում նվաճած տեղի, այն պայմանով, որ իր անհատական դասակարգման խմբում ունեցել է առնվազն մեկ մրցակից:

12. Ֆինանսավորումը

ՀՀ առաջնության ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ Պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀԱՊԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի, ինչպես նաև ՀԱՊԿ-ի միջոցներով: